ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Չանգդու) 2017թ. սեպտեմբերի 10-ից 17-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

1.Զարմինե Զեյթունցյան

2.Մեխակ Ապրեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

1.Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Չանգդու (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) 2017 թվականի սեպտեմբերի 10-ից 17-ը

4. **Հրավիրող կողմը**

ՄԱԿ-ի Զբոսաշրջության Համաշխարհային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը՝**

ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) Գլխավոր ասամբլեայի 22-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցություն

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հայաստանի պատվիրակությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանի (պատվիրակության ղեկավար) և Կոմիտեի նախագահի տեղակալ Մեխակ Ապրեսյանի, մասնակցել են ՄԱԿ ԶՀԿ գլխավոր ասամբլեայի 22-րդ նստաշրջանի աշխատանքներին: Օրակարգում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են կազմակերպության գլխավոր քարտուղարի զեկույցները, հաջորդ գլխավոր քարտուղարի թեկնածուի հաստատումը, Գործադիր խորհրդի անդամների ընտրությունը, «Զբոսաշրջության էթիկայի մասին» կոնվենցիայի նախագիծը:

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ.

- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաիի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ գործադիր տնօրեններ Կառլոս Վոգելերի և Զոլտան Շոմոգիի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ Եվրոպական տարածաշրջանային տնօրեն Իզաբել Գարանյայի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների ծրագրի տնօրեն Իզաբել Գարանյայի
- ՄԱԿ ԶՀԿ «Մետաքսի ճանապարհ» ծրագրի տնօրեն Ալլա Պերեսսոլովայի հետ,
- ՌԴ Զբոսաշրջության դաշնային գործակալության (ՌՈՍՏՈՒՐԻԶՄ) ղեկավար Օլեգ Սաֆոնովի հետ,
- Չինաստանի զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի նախագահ Լի Ջինզաոյի և նախագահի տեղակալ Ջիանգ Դուի հետ,
- Զիմբաբվեի Հանրապետության զբոսաշրջության և հյուրընկալության արդյունաբերության նախարար Վալտեր Մզեմբիի հետ,
- Ռումինիայի զբոսաշրջության նախարար Միրսեա-Տիտուս Դոբրեի հետ,
- Եմենի զբոսաշրջության նախարար, Արաբական զբոսաշրջության կազմակերպության փոխնախագահ Մոհամեդ Քուբաթիի հետ,

- Նիկարագուայի արտաքին գործերի նախարարի տեղակալ, դեպան Վալդրակ Ջաենթչկեի հետ ,
- Բելոռուսի սպորտի և երիտասարդության նախարարի տեղակալ, զբոսաշրջության ոլորտի համակարգող Միխաիլ Պարտնիի հետ,
- Շվեյցարիայի տնտեսական հարցերով պետական քարտուղարության Զբոսաշրջության տնօրինության ղեկավար, դեսպան Ռիչարդ Կամփֆի հետ,
- Շվեյցարիայի Տնտեսական հարցերով պետական քարտուղարության Խթանման տնօրինության ղեկավար, դեսպան Էրիկ Ջակոբի հետ,
- Լեհաստանի սպորտի և զբոսաշրջության նախարարության պլանավորման և զբոսաշրջության միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Տոմազ Ձիենձիուրայի հետ,
- Վրաստանի զբոսաշրջության ազգային ադմինիստացիայի ղեկավար Գիորգի Չոգովաձեի հետ,
- Եվրոպական ճանապարհորդական հանձնաժողովի գործադիր տնօրեն Էդուարդո Սանտանդերի հետ,
- «Ֆիտուր» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի գործադիր տնօրեն Անա Լարրանագայի հետ ,
- "Welcome Chinese" ընկերության տնօրեն Ջաքոբո Սերտոլիի հետ,

1. ՄԱԿ ԶՀԿ հաջորդ Գլխավոր քարտուղարի թեկնածուի շուրջ քննարկումների շրջանակներում ելույթով հանդես է եկել նաև հայկական պատվիրակության ղեկավարը, նշելով որ որպես Հայաստանի Հանրապետության նորաստեղծ Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ, թեև առաջին անգամ է մասնակցում ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեային, ականատես է եղել կազմակերպության ներսում կառուցողական և բարիդրացիական մթնոլորտին, բարձր է գնահատում ՄԱԿ ԶՀԿ դերն ու նշանակությունը համաշխարհային զբոսաշրջության կայուն զարգացման ապահովման և այդպիսով կայուն տնտեսական զարգացմանը, մշակութային բազմազանությանն ու

միջմշակույթային երկխոսությանը, միջազգային համերաշխության ու խաղաղության հաստատմանը նպաստելու գործընթացներում: Հայաստանի պատվիրակի ելույթն ընդունվել է ծափահարություններով: Քննարկումների արդյունքում ընդունվել է միաձայն որոշում և Վրաստանի ներկայացուցիչ Զուրաբ Պոլոլիկաշվիլիի թեկնածությունը հաստատվել է ծափահարու-թյուններով: Զուրաբ Պոլոլիկաշվիլին շնորհակալություն է հայտնել Հայաստանի պատվիրակությանն աջակցության համար: Հայաստանի պատվիրակությունը շնորհավորել է Զուրաբ Պոլոլիկաշվիլուն և հաստատել Մադրիդում ՄԱԿ ԶՀԿ 105-րդ նստաշրջանի ընթացքում Հայաստան այցելության հրավերը, ինչն ընդունվել է վերջինիս կողմից:

2. Նույն օրերին տեղի է ունեցել նաև «Զբոսաշրջության էթիկայի մասին» կոնվենցիայի նախագծի քննարկման Ad Hoc հանձնաժողովի նիստերը, որին անդամակցել և աշխատանքներին մասնակցել է նաև Հայաստանի պատվիրակությունը: Քննարկումների արդյունքում Հայաստանի պատվիրակության պնդմամբ և հիմնավորմամբ կոնվենցիայի նախագծում ներառվել են հետևյալ անհրաժեշտ դրույթները.

Թուրքիայի պատվիրակությունը պնդում էր Կոնվենցիայի նախագծի 4-րդ հոդվածից /Զբոսաշրջության ներդրումը ժողովուրդների և հասարակությունների միջև փոխըմբռնման և հարգանքի ձևավորմանը/ հանել ազգային փոքրամասնությունների և բնիկ ժողովուրդների սոցիալ մշակութային ավանդույթները հարգելու և նրանց արժեքներն ու իրավունքները ճանաչելու վերաբերյալ և նախագծի 5-րդ հոդվածից / Զբոսաշրջությունը որպես կոլեկտիվ և անհատական նվաճումների միջոց/ հանել ազգային փոքրամասնությունների և բնիկ ժողովուրդների՝ մարդու իրավունքների խթանման դրույթը: Հայաստանի պատվիրակությունը ելույթ է ունեցել, նշելով, որ նշված դրույթները բխում են ՄԱԿ ԶՀԿ կանոնադրությունից, առաքելությունից և գործունեության նպատակից, որ Հայաստանում ոչ միայն հարգվում և պաշտպանվում են ազգային

փոքրամասնությունների իրավունքներն ու ավանդույթները, այլ բոլոր հնարավոր ձևերով նրանց մշակույթն ու զբոսաշրջային ներուժը ներկայացվում և խթանվում է թե ներքին և թե համաշխարհային շուկայում: Համոզմունք հայտնելով, որ նույն սկզբունքները կիրառվում են նաև անդամ մյուս պետություններում Հայաստանի պատվիրակությունը պնդել է նշված դրույթները նախագծում ներառելուն: Հայաստանի պատվիրակության առաջարկությանը կողմ են քվեարկել բոլոր անդամները, բացի Թուրքիայից և Ինդոնեզիայից: Որոշումն ընդունվել է Հայաստանի պատվիրակության առաջարկությանը համապատասխան:

Քննարկում ծավալվեց նաև 9-րդ հոդվածի /Զբոսաշրջության զարգացման շահառուների պարտականությունները/ 5-րդ կետի շուրջ, որը վերաբերում է արտասահմանյան ճանապահորդությունների ընթացքում հնարավոր դժվար իրավիճանկերի կամ վտանգների մասին սեփական բնակչությանը տեղեկացնելու՝ կառավարությունների իրավունքին ու պարտականությանը: Քննարկվում էր կառավարության կողմից նման հայտարարություն տալու հետևյալ երկու ընթացակարգերը. 1. հայտարարության տեքստը հրապարակվելուց առաջ քննարկվում հյուրընկալ երկրի իրավասու մարմնի հետ, կամ 2. հայտարարության տեքստը տեղեկացվում է հյուրընկալ երկրի իրավասու մարմնին:

Հաշվի առնելով, որ նման հայտարարությունները կարող են ազդեցություն ունենալ հյուրընկալ երկրների հեղինակության վրա, և որ տարածաշրջանում անկայուն վիճակի հետ կապված Հայաստանը նույնպես որոշ դեպքերում թյուրիմացաբար հայտվել է և կարող է հայտնվել նման իրավիճակներում, Հայաստանի պատվիրակությունը հանդես է եկել ելույթով՝ պաշտպանելով 1-ին տարբերակը: Քվեարկությամբ հաստատվել է 1-ին տարբերակը:

3. ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհրդի անդամների թափուր տեղերի ընտրության շրջանակներում առաջադրվել էին հետևյալ 10 երկրները՝ Բուլղարիա, Ռումինիա, Սերբիա, Ադրբեջան, Լիտվա, Ռուսաստան, Մոլդովա, Շվեյցարիա, Թուրքիա, Հունաստան:

Արդյունքում Գործադիր խորհրդի անդամներ են ընտրվել հետևյալ երկրները՝ Լիտվա /27 ձայն/ Հունաստան /25 ձայն /, Ռուսաստան/ 22 ձայն/, Ռումինիա /22 ձայն/, Ադրբեջան /20 ձայն/ :

4. Այցի ընթացքում Հայաստանի պատվիրակությունը հարցազրույցեր է տվել 4 լրատվամիջոցների ներկայացուցիչներին, պայմանավորվածություն է ձեռք բերել, որ Հայաստան այցելի հայտնի բլոգեր Տրեյսի Կեյը:

7. Գործուղվողները՝

1.Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ՝ Զարմինե Զեյթունցյան

2. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Մեխակ Ապրեսյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Զարմինե Զեյթունցյան, 20.09.2017թ.